## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 30-Ա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշմամբ հաստատված հավելված N1-ի 7-11-րդ կետերը և Շողիկ Պողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի վարչական տարածքում գտնվող Շողիկ Պողոսյանին համասեփականության իրավունքով պատկանող 0,45 հեկտար գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքը (վարելահող, կադաստրային ծածկագիր՝ 04-009-0152-0001) փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգու:
2. Սույն որոշման մեկ օրինակը մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե Վաղարշապատի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում ստանալու նպատակով, իսկ մեկ օրինակը՝ հողամասի սեփականատիրոջը:
3. Կատարված փոփոխությունն արտացոլել յուրաքանչյուր տարվա համար կազմվող հողային հաշվեկշռում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

20 19թ. սեպտեմբերի 27
գ.Այգեկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 31-Ա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշմամբ հաստատված հավելված N1-ի 7-11-րդ կետերը և Շողիկ Պողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի վարչական տարածքում գտնվող Շողիկ Պողոսյանին համասեփականության իրավունքով պատկանող 0,29 հեկտար գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքը (վարելահող, կադաստրային ծածկագիր՝ 04-009-0153-0006) փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգու:
2. Սույն որոշման մեկ օրինակը մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե Վաղարշապատի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում ստանալու նպատակով, իսկ մեկ օրինակը՝ հողամասի սեփականատիրոջը:
3. Կատարված փոփոխությունն արտացոլել յուրաքանչյուր տարվա համար կազմվող հողային հաշվեկշռում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2019 թ. սեպտեմբերի 27
գ.Այգեկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 32-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 4-ի N46-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 2019 թվականի բյուջեի ֆինանսական ծախսերի կատարման նախահաշվում կատարել փոփոխություն՝
   1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 01.06.01 բաժնի 5122 հոդվածից 247,3 հազար դրամն և 5134 հոդվածից 52,7 հազար դրամն ուղղել նույն բաժնի 5113 հոդվածին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2019թ. սեպտեմբերի 27
գ.Այգեկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 33-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդված ութերորդ մասի 3-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Էդիկ Ջեյնալյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքում գտնվող Էդիկ Ջեյնալյանին սեփականության իրավունքով պատկանող 04-009-0145-0018 կադաստրային ծածկագրով 0,4հա գյուղատնտեսական նշանակության հողամասից (վարելահող) 587,34 քառակուսի մետր հողամասի վրա՝ նախագծին համապատասխան կառուցապատում իրականացնելիս (անասնաշենքի կառուցում՝ անասնաշենք՝ 492,0 քառակուսի մետր, պահակատուն՝ 40,0 քառակուսի մետր, պարիսպ՝ 55,34 քառակուսի մետր) հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի, այն արտացոլել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
2. Էդիկ Ջեյնալյանին սահմանված կարգով տալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2019թ. սեպտեմբերի 30
գ.Այգեկ